# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ անձանց՝ հասարակական հիմունքներով ընդգրկվելու Երևանի քաղաքապետին կից «Երիտասարդության հարցերի խորհրդի» (այսուհետ՝ Խորհուրդ) կազմում:

**Խորհրդի հիմնական նպատակն է** աջակցել Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակմանն ու հասցեավորված և նպատակային իրականացմանը, ինչպես նաև խթանել երիտասարդների, երիտասարդների ոչ ֆորմալ խմբերի և երիտասարդական կազմակերպությունների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր բնագավառներում:

**Խորհրդի հիմնական խնդիրներն են՝**

ա) Երևան համայնքում երիտասարդական քաղաքականության հասցեականության և արդյունավետության բարձրացումը:

բ) Երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը համայնքային երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում:

գ) Երևան համայնքում բնակվող երիտասարդների հարցերին առնչվող համայնքային ծրագրերի և նախաձեռնությունների քննարկումը և համապատասխան ծրագրային և ֆինանսական առաջարկների ներկայացումը Երևանի քաղաքապետին:

դ) Երևան համայնքում բնակվող երիտասարդների կարիքների և երիտասարդներին առնչվող կրթական, առողջապահական, սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների քննարկումը և համապատասխան առաջարկների ներկայացումը Երևանի քաղաքապետին:

դ) Երևանում երիտասարդական աշխատանքի, կամավորության և ոչ ֆորմալ կրթության զարգացմանն ու ճանաչմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

**Խորհրդին կարող են անդամակցել բոլոր այն շահագրգիռ անձինք, ովքեր՝**

- ունեն տեղական, ազգային կամ միջազգային երիտասարդական աշխատանքի փորձ,
- ակտիվ գործունեություն և ծրագրեր են իրականացնում Երևան քաղաքում երիտասարդների աջակցման, հզորացման և զարգացման ուղղություններով,
- հանդիսանում են երիտասարդական աշխատող, երիտասարդության հարցերի փորձագետ կամ երիտասարդական կազմակերպության ներկայացուցիչ,
- տեղեկացված են երիտասարդության ոլորտի մարտահրավերներից, զարգացումներից և միտումներից,
- պատրաստ են հասարակական հիմունքներով իրենց ներդրումն ունենալ Երևան քաղաքում երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման մեջ:

**Խորհրդին միանալու համար թեկնածուն պետք է** մինչև 2024 թվականի դեկտեմբերի 13-ը ժամը 17:00-ն (բացի շաբաթ և կիրակի օրերից) դիմում ներկայացնի

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն՝ Բյուզանդի 1/3 (5-րդ հարկ) հասցեով (ընդմիջում՝ 13:00-ից 14:00-ն):

Դիմումին կից (դիմումը լրացվում է տեղում) անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝ պատճենների հետ միասին.

- անձը հաստատող փաստաթուղթ,
- ինքնակենսագրական (CV),
- երիտասարդության հարցերի բնագավառում պահանջվող փորձառությունը հավաստող փաստաթղթեր,
- կրթությունն ու որակավորումը հավաստող փաստաթղթեր,
- մեկ լուսանկար 3X4 չափի:

Տեղեկացնում ենք, որ Խորհրդի կազմը սահմանափակ է և վերջնական ընտրությունը կատարվում է վերը նշված չափորոշիչների հիման վրա:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել 011-514-396 հեռախոսահամարով: